

ՓՈԽԸՄԲՈՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻՏԵՆԳՐՈՅԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՄԻՋԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը (այսուհետ՝ ՀՀ ԱԻՆ) և Մոնիտենգրոյի ներքին գործերի նախարարության արտակարգ իրավիճակների կառավարման ու քաղաքացիական պաշտպանության բաժանմունքը (այսուհետ՝ ՄՆԳՆ), այսուհետ՝ Կողմեր, փոխադարձ համագործակցությունն ամրապնդելու մտադրությամբ և քաղաքացիական պաշտպանության ազգային համակարգերի հետագա համատեղ ծրագրերի մշակման ու աղետների ռիսկերի կառավարման նպատակով՝

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1. Համագործակցության նպատակները

Սույն Փոխըմբռնման Հուշագրի նպատակն է ստեղծել համագործակցության շրջանակ և խրախուսել համատեղ գործողությունների ծրագիր: Կողմերն ընդունում են համատեղ աշխատելու փոխշահավետությունը՝ նոր մեթոդաբանություն, համակարգեր և միջոցներ մշակելու համար: Համագործակցությունը, որը հիմնված է հավասարության, փոխհամագործակցության և փոխշահավետության վրա, նպատակ է հետապնդում լուծելու ընդհանուր խնդիրները և բարելավելու արտակարգ իրավիճակներին պատրաստվածության կարողությունները:

Հոդված 2. Համագործակցության ոլորտները

Կողմերը պետք է համագործակցեն հետաքրքրություն ներկայացնող հետևյալ ոլորտներում.

1. Հմտությունների և մեթոդների մշակում Կողմերի՝ արտակարգ իրավիճակներին պատրաստվածության, արձագանքման, հետևանքների վերացման և տարերային ու տեխնաձին աղետների ռիսկերի նվազեցման ուղղությամբ, ներառյալ.

- 1) շրջակա միջավայրի, արդյունաբերական և բնական վտանգավոր երևույթների մոնիթորինգը,

- 2) տարերային և տեխնաձին բնույթի արտակարգ իրավիճակների ու աղետների կանխատեսումը,
- 3) աղետների հետևանքների և արձագանքման կարիքների գնահատումը,
- 4) արտակարգ իրավիճակների գործողությունների պլանների մշակումը,
- 5) ընդհանուր ռիսկերի նվազեցման ամբողջական ռազմավարության և մեթոդաբանության մշակումը:

2. Ուղղակի և ժամանակին հաղորդակցության մեխանիզմների ստեղծում .

- 1) Հայաստանի Հանրապետության և Մոնտենեգրոյի տարածքներում տեղի ունեցող տարերային և տեխնաձին բնույթի արտակարգ իրավիճակների կամ աղետների վերաբերյալ տեղեկատվություն փոխանցելու համար,
- 2) կողմերի միջև աջակցության խնդրանք և առաջարկներ ներկայացնելը:

3. Վերլուծություն՝ համագործակցության և փոխադարձ օժանդակության ռազմավարությունն աղետների դեպքում կիրառելու համար:

4. Աղետների ռիսկի նվազեցման, արտակարգ իրավիճակներին պատրաստվածության և դրանց արձագանքման ոլորտում համատեղ ծրագրերին ՀՀ ԱԻՆ -ի և ՄՆԳՆ -ի մասնակցության խրախուսում:

5. Հանրային տեղեկատվության խթանում և աշխատանքներ զանգվածային լրատվամիջոցների հետ:

6. Աղետների ռիսկի նվազեցման, արտակարգ իրավիճակներին պատրաստվածության և դրանց արձագանքման ոլորտում ուսուցման, գիտելիքների և նորարարության խթանում:

7. Հայաստանի Հանրապետությունում և Մոնտենեգրոյում համաձայնեցված թեմաներով ուսուցողական դասընթացների, սեմինարների և համաժողովների կազմակերպում:

8. Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմի հաստատման և Աղետների ռիսկի նվազեցման ազգային ռազմավարության մշակման համար տեխնիկական խորհրդատվության և փորձագիտության տրամադրում:

Հոդված 3. Համագործակցության մեթոդները և ֆինանսական ասպեկտները

Գիտակցելով հավաստի և ժամանակին հաղորդակցության կարևորությունը՝ Կողմերը համաձայնել են հիմնել համապատասխան կապի կետեր: Սույն Փոխըմբռնման Հուշագրի իրականացումը կկառավարվի համատեղ աշխատանքային խմբի կողմից, որը պլանավորում է, համակարգում և վերահսկում է սույն Փոխըմբռնման Հուշագրով նախատեսված համատեղ գործողությունները:

Համատեղ աշխատանքային խումբը կստեղծվի Կողմերի միջև հետագա բանակցությունների հիման վրա:

Սույն Փոխըմբռնման Հուշագիրը Կողմերի համար որևէ ֆինանսական պարտավորություն չի առաջացնի: Փոխըմբռնման Հուշագրի իրականացմանն աջակցելու նպատակով ՀՀ ԱԻՆ-ը և ՄՆԳՆ-ն պատասխանատու կլինեն համապատասխանաբար իրենց կազմակերպչական ծախսերի համար:

Հոդված 4. Համագործակցության շրջանակները

Սույն Փոխըմբռնման Հուշագրով սահմանված գործողությունների արդյունքում ստացված տեղեկատվությունը, բացառելով յուրաքանչյուր Կողմի չբարձրաձայնվող կիրառելի օրենքներն ու կանոնակարգերը, կարող է հասանելի լինել ողջ հանրությանը՝ սովորական ուղիներով և Կողմերի նորմալ գործունեության ու կանոնակարգերի միջոցով:

Սույն Փոխըմբռնման Հուշագիրը չի ազդի Հայաստանի Հանրապետության և Մոնտենեգրոյի արտակարգ իրավիճակների կանխարգելման, պատրաստվածության և արձագանքման ոլորտում այլ պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության վրա և ոչ էլ այս ոլորտում Հայաստանի Հանրապետության և Մոնտենեգրոյի գերատեսչությունների ընթացիկ համագործակցության վրա:

Սույն փոխըմբռնման հուշագիրը չի հանդիսանում միջազգային պայմանագիր և չի ստեղծում իրավական պարտավորություններ Կողմերի պետությունների համար :

Հոդված 5. Հուշագրի ուժի մեջ մտնելը, փոփոխելը և դադարելը


Սույն Փոխըմբռնման Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից: Փոխըմբռնման Հուշագիրը ստորագրվում է հինգ տարի ժամկետով, որը կարող է Կողմերի գրավոր համաձայնությամբ երկարացվել ևս հինգ տարով:

Սույն Փոխըմբռնման Հուշագիրը կարող է Կողմերի փոխադարձ համաձայնությամբ փոփոխվել: Յուրաքանչյուր Կողմ կարող է սույն Փոխըմբռնման Հուշագիրը ցանկացած ժամանակ ընդհատել՝ վեց ամիս առաջ այդ մասին գրավոր ծանուցելով մյուս Կողմին:

Սույն Փոխըմբռնման Հուշագրի ավարտը կամ ընդհատումը չի ազդի ավարտից առաջ սկսված, սակայն ավարտի կամ ընդհատման պահին չավարտված որևէ այլ գործողության տևողության կամ վավերականության վրա:


Ի վկայություն վերոնշյալի՝ պատշաճ կերպով լիազորված անձինք ստորագրել են սույն Փոխընթացման Հուշագիրը:

Կատարված է 2011 թվականի հունիսի 15-ին, ք. Երևանում, 2 բնօրինակով՝ հայերեն, մոնտենեգրերեն և անգլերեն տեքստերով: Տարածայնությունների դեպքում կգերակայի անգլերեն տեքստը:



ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար

Արմեն Երիցյան



Մոնտենեգրոյի ներքին գործերի փոխնախարար և Արտակարգ իրավիճակների վարչության ղեկավար

Ջորան Բեգովիչ